Արձանագրություն թիվ 1

2018 թվականի սեպտեմբերի 11-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 3բ դասարանի ծնողական ժողովը:Ժողովին ներկա էին բոլոր ծնողները. դասվար Նելլի Քոչարյանը, տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1.Ծնողխորհրդի ընտրության հարցը:

2.Տաք սննդին առնչվող հարցի քննարկում:

3.Ընթացիկ հարցեր/կարգապահություն,ռեժիմ/:

1.Լսեցին.- Ծնողխորհրդի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասվարՆելլի Քոչարյանը՝ տեղեկացնելով,որ ուստարվա սկզբին պետք է ձևավորել ծնողխորհուրդ,որի գործառույթներից է սովորողների արտադպրոցական աշխատանքներում ներգրավելը,նրանց հանգիստն ու ժամանցը կազմակերպելը:Անհրաժեշտ է ծնողխորհրդի կազմում ընդգրկել ակտիվ ծնողներին Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 3բ դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց Փանոսյան Անիի,Բաղալյան Նարինեի,Պողոսյան Լիանայի,Մարտիրոսյան Կարինեի,Մաթևոսյան Մարգարիտայի թեկնածությունը,որից հետո ընտրեցին ծնողխորհրդի նախագահ:

Որոշեցին.-Առաջարկել տնօրենությանը՝հաստատելու ծնողխորհրդի հետևյալ կազմը.

Նախագահ՝ Մաթևոսյան Մարգարիտա

Անդամներ՝ Փանոսյան Անի

Բաղալյան Նարինե

Պողոսյան Լիանա

Մարտիրոսյան Կարինե

2.Լսեցին.-<<Տաք սնունդ ծրագրին առնչվող հարցը>>:

Ծնողներին ներկայացվեց այն մթերքների ցանկը, որը ծրագրի շրջանակներում տրամադրվում է դպրոցին:Նշվեց,որ կարևոր պարագաներ,ինչպիսիք են աղը, մաքրման միջոցները, դպրոցը պետք է ձեռք բերի: Ուստի՝ անհրաժեշտ է նաև ծնողների աջակցությունը:Ծնողներին տեղեկացվեց, որ ծրագրում գոյություն ունի

<<Ծնողական ներդրում>> հասկացությունը,որի ժամանակ նախատեսված գումարի չափը կազմում է 100-ից 300դրամ:

Որոշեցին.- Յուրաքանչյուր ամիս հավաքել 300 դրամ՝ անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու համար: -

3.Օրակարգային հիմնահարցերը քննարկելուց հետո անդրադարձ կատարվեց ընթացիկ հարցերին:
ԴասվարՆելլի Քոչարյանը նշեց,որ նոր ուսումնական տարում դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով: Դասվարը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ,հետևել,որ աշակերտները դպրոց հաճախեն ժամանակին, պայուսակով,դասագրքերով,գրենական պիտույքներով ու աշակերտին վայել հագուկապով: Քննարկվեցին դասարանին անհրաժեշտ տետրերի հարցերը:

Որոշեցին.-Ուշադիր և հետևողական լինել սովորողների նկատմամբ, անհրաժեշտության դեպքում աջակցել դասվարին անհրաժեշտ ուսումնական պարագաներ/տետրեր/ ձեռք բերելու հարցում՝

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Մ.Մաթևոսյան/

Քարտուղար՝ /Ա.Փանոսյան/